«ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ
ԱՍՈՑԻԱՑԻԱ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՎՀՀ - 00138021

«Association of accountants of Armenia»
Non Governmental Organization
«Ассоциация бухгалтеров Армении»
Общественная Организация
TIN / ИНН - 00138021

(011) 60 00 00 (041) 60 00 90 www.armaa.am info@armaa.am www.facebook.com/armaa.ngo

ՀՀ, ք. Երևան, Արաբկիր ՎՇ, Վաղարշյան 12, 5-րդ հարկ

04.12.2025թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ
պարոն Եղիազար Վարդանյանին
«Հայաստանի հաշվապահների ասոցիացիա»
ՀԿ-ի նախագահ Հերմինե Թովմասյանից

Հարգելի՛ պարոն Վարդանյան.

Ներկայացնում եմ Ձեզ «Հայաստանի հաշվապահների ասոցիացիա» հասարակական կազմակերպության հայտը՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու վերաբերյալ:

Հայաստանի հաշվապահների ասոցիացիան հիմնադրվել է 2014թ. նոյեմբերի 10-ին՝ Հայաստանում գործող մի քանի տասնյակ հաշվապահական հաշվառման գրասենյակների ներկայացուցիչների նախաձեռնությամբ: Այն հասարակական կառույց է, որը որդեգրելով «Կրթություն, որակավորում, հսկողություն» կարգախոսը, իր առջև նպատակ է դրել հաշվապահների մասնագիտական-սոցիալական պատասխանատվության բարձրացմամբ նպաստել Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական և հարկային հաշվառման համակարգի զարգացմանը, որն իր հերթին կնպաստի գործարար միջավայրի բարելավմանը, երկրի տնտեսության և քաղաքացիական հասարակության զարգացմանը: Ասոցիացիան, որպես իր առաքելության անբաժանելի մաս, կարևորում է հաշվապահների կողմից մասնագիտական էթիկայի կանոնների պահպանման և օրինապահ վարքագծի դրսևորման խթանումը:

Ասոցիացիան իր գործունեության առանցքում ունի անդամների շարունակական մասնագիտական զարգացման ապահովումը, ինչը մարդկային կապիտալի զարգացման հիմնարար բաղադրիչ է: Ասոցիացիան համարում է, որ բարձր որակավորում ունեցող, շարունակաբար վերապատրաստվող և արդիական գիտելիքներով զինված մասնագետներն են ապահովում ոչ միայն մասնագիտական միջավայրի, այլև երկրի սոցիալ-տնտեսական համակարգի կայուն զարգացումը:

Ասոցիացիայի հիմնական խնդիրներից մեկը հանրապետությունում հաշվապահների միջոցով գերակա խնդիրների վերհանումն է, ներկայացումը համապատասխան մարմիններին և գործակցությունը դրանց լուծման ուղղությամբ:

Ասոցիացիայի նպատակներն են՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով

- աջակցել ՀՀ-ում հաշվապահական և հարկային հաշվառման համակարգի և գործունեության զարգացմանը,
- հաշվապահների մասնագիտական-սոցիալական պատասխանատվության բարձրացմամբ նպաստել քաղաքացիական հասարակության զարգացմանը, այդ թվում՝ պետություն-մասնավոր գործընկերության զարգացմանը,
- պետական, միջազգային և այլ կազմակերպություններում ստեղծված խորհուրդներում, հանձնաժողովներում և այլ մարմիններում ոլորտի տնտեսվարողներին վերաբերվող իրավական

ակտերի, փաստաթղթաշրջանառությանը կամ այլ նմանատիպ հարցերի հետ առնչվող հանրային քննարկումներին ցուցաբերել ներկայացուցչական մասնակցություն և նպաստել հասարակության շահերի պաշտպանմանը,

- նպաստել համապատասխան (մասնագիտական) միջազգային կազմակերպությունների և բնագավառի օտարերկրյա ու տեղական մասնագետների կողմից Ասոցիացիայի կրթական ծրագրերի ճանաչմանը,
- աջակցել Ասոցիացիայի անդամների մասնագիտական հմտության և փորձառության ձեռքբերմանը,
- աջակցել Ասոցիացիայի անդամների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը:

Ասոցիացիան այժմ ակտիվորեն համագործակցում է Հայաստանում գործող 41 հաշվապահական գրասենյակների հետ, որոնցից 37-ը գործում են մարզային քաղաքներում, իսկ 4-ը՝ Երևան քաղաքում: Գրասենյակների կողմից այս պահին սպասարկվում են մոտ 13.300 գործող հաճախորդ:

Ընդգրկված լինելով մի շարք պետական մարմինների հասարակական խորհուրդների կազմում՝ Ասոցիացիան իր անդամ հաշվապահական հաշվառման գրասենյակների միջոցով հավաքագրում և վերլուծում է իրավակիրառ պրակտիկայում հանդիպած խնդիրները, որի հիման վրա առաջարկներ է ներկայացնում համապատասխան քաղաքականություն և վարչարարություն մշակող պետական մարմիններ և Ազգային ժողով՝ հետևողական գործունեության արդյունքում բարելավելով գործարար միջավայրի օրենսդրական դաշտը:

Ասոցիացիան համագործակցում է ակտիվ գործունեություն իրականացնող հասարակական կառույցների հետ՝ նպատակ ունենալով վերջիններիս միջոցով ապահովել հանրության ներգրավվածությունը ծրագրերի մշակման և իրականացման գործընթացում: Ասոցիացիան, հանրային քննարկումներին ցուցաբերելով ներկայացուցչական մասնակցություն, գործընկեր հասարակական կառույցների հետ համատեղ նպաստում է հասարակության օրինական շահերի պաշտպանությանը: Հասարակական կառույցների ակտիվ մասնակցությունը իրավական ակտերի տարբեր նախագծերի մշակմանը, համատեղ քննարկումները հնարավորություն են տալիս որդեգրել առավել արդյունավետ և իրատեսական քաղաքականություն:

Ասոցիացիայի փորձագետների կողմից իրականացվում է ոլորտի իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրություն և տրամադրվում ուսումնասիրության արդյունքում ձևավորված մասնագիտական կարծիք:

Ասոցիացիան համագործակցում է նաև Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի Հայաստանի ներդրումային խորհրդի հետ, որի շրջանակներում, որպես ՓՄՁ պետություն-մասնավոր երկխոսության հարթակի անդամ, ներկայացնում է օրենսդրական խնդիրներ, մշակում դրանց լուծմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների առաջարկներ, հանդիսանում է փոխվարչապետի գլխավորությամբ գործող ՓՄՁ խորհրդի դիտորդ անդամ: Կից ուղարկվում է Ներդրումային խորհրդի պաշտոնական նամակն այն մասին, որ Ասոցիացիան հանդիսանում է ՓՄՁ խորհրդի դիտորդ անդամ:

Համագործակցությունների, տարբեր հանրային քննարկումներին մասնակցությունների, իրականացվող ծրագրերի մասին մանրամասն տեղեկատվություն ներկայացված է Ասոցիացիայի www.armaa.am կայքում:

«Հայաստանի հաշվապահների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը, հանդիսանալով հաշվապահական և հարկային ոլորտում գործող մասնագիտական կառույց, ներկայացնում է իր պատրաստակամությունը աջակցելու ՀՀ քաղաքաշինության կոմիտեի խնդիրների և նպատակների իրականացման գործընթացին՝ ներկայացնելով դիտարկումներ և առաջարկներ հետևյալ ուղղություններով.

- **Իրավակիրառ պրակտիկայում վերհանված խնդիրների ներկայացում**

Ասոցիացիան իր անդամ 41 հաշվապահական գրասենյակների և ավելի քան 400 անդամների միջոցով հավաքագրում է քաղաքաշինության բնագավառում գործարար միջավայրի իրավակիրառ պրակտիկայում առաջացած խնդիրները, մասնավորապես՝ ոլորտում լիցենզիաների, թույլտվությունների տրամադրման, վարչարարության, հարկման առանձնահատկությունների հետ կապված և այլն, վերլուծում գործնական և իրավական խոչընդոտները, հարցերի պարզաբանման նպատակով ուղարկում է նաև պաշտոնական հարցումներ ՀՀ քաղաքաշինության կոմիտեին: Ոլորտային խնդիրների բացահայտման և լուծման նպատակով դեռևս 2023 թվականից Ասոցիացիան համագործակցում է նաև «Կառուցապատողների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության հետ: Կից ներկայացված է կնքված համագործակցության հուշագիրը:

- **Իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ մասնագիտական կարծիք**

Ասոցիացիայի փորձագետները կարող են իրականացնել իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրություն և տրամադրել մասնագիտական կարծիք հաշվապահական և կիրառական տեսանկյունից, մասնավորապես՝ այն նախագծերի վերաբերյալ, որոնք ազդեցություն են ունենում քաղաքաշինության բնագավառում գործունեության առանձին տեսակների լիցենզավորման, հարկերի հաշվարկման վրա, առաջացնում կամ փոփոխում են հաշվետվական պարտավորություններ, ազդեցություն են ունենում ոլորտի տնտեսվարողների ծախսերի և վարչարարական բեռի վրա, ինչը թույլ

կտա փաստահեն քաղաքականություն ձևավորել և գնահատել նաև որոշումների սոցիալ-տնտեսական ազդեցությունը:

- **Ոլորտային իրազեկումների իրականացում, հանդիպումների, թեմատիկ լսումների կազմակերպում**

Մարզային սփռվածությունը հնարավորություն է ընձեռում իրականացնել ոլորտային փոփոխությունների մասին իրազեկման արշավներ ոչ միայն Երևանում, այլ նաև մարզերում գործող տնտեսվարողների շրջանակում, ինչը թույլ է տալիս աջակցել կոմիտեին փոփոխությունների մասին արագ և արդյունավետ հաղորդակցման գործընթացում:

- **Հանրային քննարկումներին մասնակցություն և շահառուների ներգրավում**

Ունենալով տարբեր հասարակական խորհուրդներում և աշխատանքային խմբերում բազմամյա փորձ՝ Ասոցիացիան ներկայացնում է ոչ միայն մասնագիտական կարծիք, այլև տնտեսվարողների և շահառու խմբերի տեսակետները՝ ապահովելով որոշումների ընդունման ավելի ընդգրկուն, ներառական և մասնագիտական հիմք:

Հայտին կից ներկայացվում են՝

- իրավաբանական անձանց պետական ռեգիստրի միասնական գրանցամատյանից քաղվածքի պատճենը,
- Ասոցիացիայի կանոնադրության պատճենը,
- հիմնական ներկայացուցչի նույնականացման քարտի պատճենը:

Որպես Ասոցիացիայի հիմնական ներկայացուցիչ հանդես կգա Ասոցիացիայի նախագահ Հերմինե Արտակի Թովմասյանը (հեռախոսահամար՝ +37491470871, էլեկտրոնային փոստ՝ president@armaa.am): Հաշվի առնելով քննարկվող հարցերի բնույթը՝ Ասոցիացիայից որպես ներկայացուցիչ կարող է հանդես գալ ոլորտի առավել խորը մասնագիտական ու փորձագիտական գիտելիքներ ունեցող այլ անձ:

Կանխավ շնորհակալություն:

Նախագահ՝ **Հերմինե Թովմասյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ
ASSOCIATION OF ACCOUNTANTS OF ARMENIA
АСОЦИАЦИЯ БУХГАЛТЕРОВ АРМЕНИИ
00138021
NON GOVERNMENTAL ORGANIZATION